

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴԱՌՆԱԿՍԿԻԾ ՄԱՀՎԱՆ ՍՈՒԹԻՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ԹԵՄԵՐԻՑ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ և ԱՌԱՆՁԻՆ ԱՆՀԱՏՆԵՐԻՑ

ԵՐԵՎԱՆԻՑ

Արտասահմանի հետ Կուլտուրական կապի Հայկական ընկերությունը իր խորին ցավակցությունն է հայտնում մեծ հայրենասեր, ժողովուրդների միջև խաղաղության եռանդուն պաշտպան, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԵՏ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական մատենադարանի դիրեկցիան իր խորը ցավակցությունն է հայտնում ջերմ հայրենասեր և խաղաղության գործի մեծ պաշտպան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԴԻՐԵԿՑԻԱ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Գեորգ Զ.ի հոգու հանգստյան համար Սրբոց Հակոբյանց տաճարում այսօր մատուցվեց հանդիսավոր պատարագ և կատարվեց հոգեհանգստյան տխուր արարողություն՝ բազմաթիվ հոգևորական դասի և լայնածավալ հավատացյալների ներկայությամբ: Քարոզով տեղեկացվեցին երջանկահիշատակ Կաթողիկոսի մատուցած մեծ ծառայությունները թե՛ ազգին և թե՛ մեր եկեղեցուն: Ամենաարարիչը թող մեր Ծայրագույն Պատրիարքի հոգին լուսավորի երկնային դրախտում, և մեր եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինն անսասան պահի:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքական տեղապահի տեղակալ՝
ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Երանաշնորհ անգուգական եպիսկոպոսապետ Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսի անակնկալ վախճանումը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո համար մեծ հարված է, զոր կզգա հայ ազգի ընդհանրությունը: Ամենախոր վշտակցությամբ կմաղթենք երկնային անթառամ փառապսակ եռամեծ Վեհի հոգվույն, և անսասանություն՝ Մայր Աթոռին: Ամենասիրելի Հոգևորի թաղման, օծման և գումարելի եպիսկոպոսաց ժողովին անձամբ մասնակցելու նվիրական պարտականության խորապես գիտակից, կխնդրեմ ներողամիտ լինել՝ երբ չկարենամ գալ ուշ մնալու պատճառով:

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻՑ

Հավետ ողբացյալ և սիրելի Տ. Տ. Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսի անփոխարինելի կորստի առթիվ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վարչական-դասախոսական կազմը և ուսանողությունը բաժանում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի խորունկ վիշտը:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը միշտ էլ Վեհափառ Հայրապետի սրտին ամենամոտիկ հաստատությունն է եղել, որին Նա շրջապատել է իր հայրական անսպառ գուրգուրանքով: Հոգևոր Ճեմարանը Նորին Վեհափառության համար հանդիսանում էր մի դարբնոց, որտեղ պիտի մշակվեր քրիստոնեական և հայեցի դաստիարակությամբ հոգևորականների մի խոստումնալից սերունդ, որը կարող լիներ արքությամբ և պատվով կատարել իր պարտքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ հավատացյալների հոգևոր ծառայության գործում: Մինչև վերջին օրերը Վեհափառը շարունակում էր մտածել Հոգևոր Ճեմարանի արդյունավետ և լավագույն ապագայի համար:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը և դասախոսական կազմը խորունկ երախտագիտությամբ ծնրադրում են հայոց ուսումնասեր և մեծագործ Հայրապետի դագաղի առաջ և ուխտում են արքությամբ պահել Նրա խնկելի հիշատակը և խոստանում են պատվով իրագործել Նրա պատգամները՝ նոր սերնդին նախնյաց հայրենանվեր ոգով դաստիարակելու նվիրական գործում:

Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունն ու հիշատակը հավետ վառ կմնան Հոգևոր Ճեմարանի տարեգրության մեջ:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ
ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ, ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ
ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ

ՓԱՐԻԶԻՑ

Ցավում եմ Վեհափառի թաղման բացակա լինելուս համար: Հայտնում եմ խոր ցավակցություններ, մեծ վիշտ, որդիական հավատարմություն:

Եվրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ՝
ՍԵՐՈՎԲԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԻԳՈՍԻԱՅԻՑ

Խորապես վշտացած ենք անփոխարինելի կորստի առթիվ:

Առաջնորդ Կիպրոսի թեմի՝
ՂԵՎՈՆԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵՊԵՅԱՆ

ՀԱԼԵՊԻՑ

Խորին ցավակցություններ ենք հայտնում Գերագույն Հոգևոր Խորհրդին և միաբանության: Աղոթում ենք հոգու հանգստության համար: Տերը պահպանի Հայոց Եկեղեցին:

Առաջնորդ Հալեպի թեմի՝
ԶԱՐԵՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՅԱՍԼՅԱՆ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Խոր ցավակցություն ենք հայտնում Գեորգ Կաթողիկոսի մահվան առթիվ: Կարգադրել ենք մեր թեմի բոլոր եկեղեցիներում մատուցել պատարագ: Տերը պահպանի Հայոց Եկեղեցին և Ազգը:

Առաջնորդ Լիբանանի թեմի՝
ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐՈՅԱՆ

ԱՄՄԱՆԻՑ

Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ ընդունեցեք մեր խորին ցավակցությունները:

Հորդանանի հայոց հոգևոր տեսուչ՝
ԿՈՐՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԲՈՍՏՈՆԻՑ

Կողբանք հայրենասեր մեծ եկեղեցական և Հայոց եկեղեցվո Պետ Գեորգ Կաթողիկոսի դառնաղետ մահը: Հանուն Բոստոնի հայոց Ս. Երրորդություն եկեղեցվո և ժողովրդյան, կհայտնենք Ձեզ մեր խորին ցավակցությունները: Տերը անսասան պահե Հայաստանյայց Եկեղեցին և Մայր Աթոռը:

Ի դիմաց ծխական խորհուրդի
Համայնքի նախագահ՝ ԲԱԲԳԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՔՍՈՒՏՅԱՆ
Առենապետ՝ ՀԱՊԵՇՅԱՆ
Առենադպիր՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱՆԻԿՅԱՆ

ԹԵՀԵՐԱՆԻՑ

Անհուն կսկիծով համակված՝ ողբում ենք Վեհափառ Հայրապետի մահը: Մնկաշոք հայցում ենք Ամենակալից, որ Ս. Էջմիածնի Գահին պարգևի մի նոր արժանավոր Կաթողիկոս: Կարգադրված է ինչպես Թեհրանի Մայր եկեղեցում, այնպես և թեմի բոլոր եկեղեցիներում մայիսի 27-ին, Վեհափառ Հայրապետի թաղման առթիվ մատուցել սուրբ պատարագ և կատարել հոգեհանգստի տխուր արարողություն:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ԲԱՂԴԱԴԻՑ

Հայոց համայնքը մեծ հարվածով ստացավ երեկ հեռագրերը՝ Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի անսպասելի հիվանդության և մահվան լուրի առթիվ: Մեր հոգևորականությունը, հայոց համայնքի հետ միասին, կատարեց պատարագ Նորին Սրբության հոգու հանգստյան համար:

ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻՑ

Վրաստանի հայոց թեմի հոգևորականությունը ցնցված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան բոթաբեր լուրից և ծնկաչոք աղոթք է վերառաքում Ամենաբարձրյալին՝ Նորին Սրբության հոգու հանգստյան համար:

ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍ

ՌՈՍՏՈՎԻՑ

Հայ եկեղեցու ականավոր և անփոխարինելի Հովվապետի մահվան բոթը կայծակի արագությամբ տարածվեց աշխարհի բոլոր անկյուններում, որտեղ հայեր են ապրում:

Թանկագին Վեհափառը հայտնի էր ո՛չ միայն իբրև եկեղեցու Հայրապետ, այլ Նրան ճանաչում էր ամբողջ առաջավոր մարդկությունը՝ որպես խաղաղության պաշտպանության ջերմեռանդ մարտիկի: Հանգուցյալ Վեհի գործերն անմահ են: Հատկապես Նրա հայրենակիցները՝ Նոր-Նախիջևանի հայերը հավետ կպահեն Նրա հիշատակը:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ
ԹԵՄԱԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
ԵՎ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԼՈՈՒԵԼԻՑ

Ամերիկայի Հայոց Եկեղեցու Դպրաց դասերի միությունը խորը վշտով ցավակցում է մեր սիրելի Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Ամերիկայի Հայոց Եկեղեցու դպրաց դասերի միության նախագահ՝
ԹՈՐԳՈՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԵԹՂԵՀԵՄԻՑ

Ամենախոր վշտով լսվեցավ մահագույժ Նորին Ս. Օծության Ամենայն Հայոց Սրբազնագույն Վեհափառ Հայրապետին այսօր, 10 մայիսին:

Դառնակսկիծ վշտով և սրտով ես և մանկունք իմ կուգանք ծնրադրել հանգուցյալ լուսահոգի Հայրապետին դագաղին առաջ և խնդրել, որ Տեր լուսավորե հոգին Սրբազան Հայրապետին ու պահե հաստատ և անսասան Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Դա Մխիթարիչը մխիթարելու միաբան Ազգն մեր և եկեղեցին:

Սգասիրտ որդին Ձեր,

Ժամարար Ս. Ծննդյան հայ վանուց Բեթղեհեմի՝
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ (Վանեցի)

ՏԵԼ-ԱՎԻՎԻՑ

Խորապես ցավում եմ թաղման արարողության մասնակցելու հնարավորությունից զրկվելուս համար: Մաղթում ենք առ Աստված, որ անմահ պահե մեր սիրեցյալ Վեհափառի հիշատակը և մեզ պարգևե արժանավոր հաջորդ:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչ՝
ԲԱԲԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՊԱՏՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Վեհափառ Կաթողիկոսի մահը խորը վիշտ պատճառեց մեզ: Ողբում ենք Ձեզ հետ այս մեծ և անդարմանելի կորուստը:

Էջմիածնի կենտրոնական հիմնադրամի հանձնաժողովի նախագահ՝
ԱՐԳԱՐ ՏՐՈՒՍՏ,
ԻԶՄԻՐՅԱՆ,
ՀԱԿՈԲՅԱՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Ֆրեզնո-Կալիֆորնիայի Հայ-ամերիկյան բաղամացիներու միությունը խորին ցավակցություն կհայտնե Կաթողիկոսի վախճանման առթիվ: Աստված հոգին լուսավորե Հայրապետին, Աստված շուտով նոր կաթողիկոս մը շնորհե:

ՄԱՐՏԻՆ ՍՈԼԻԿՅԱՆ,
ԵԴՎԱՐԴ ՏԵՎԵՃՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Պրեզիդենտի, վիցե-պրեզիդենտի և Բրիտանա-սովետական բարեկամության ընկերության գործադիր կոմիտեի անունից հայտնում եմ Ձեզ խորին ցավակցություններ՝ Սովետական Հայաստան այցելող բազմաթիվ բրիտանացիներին ծանոթ Վեհափառ Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ.

Բրիտանա-սովետական բարեկամության ընկերության
գործադիր կոմիտեի գլխավոր քարտուղար՝
ՍԼՈԱՆ

ԼԻՈՆԻՑ

Ցավակցություններ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավալի կորստյան առթիվ:

ԼԻՈՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Մեծ եկեղեցականի և անվեհեր հայրենասերի՝ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ.ի վախճանման առթիվ «Երիտասարդ Հայաստան» թերթը իր պաշտոնական մարմիններու, խմբագրության, վարչության աշխատակիցներու կողմե կհայտնե խոր ցավակցություններ և կխոնարհի Անոր անթառամ հիշատակին առջև:

Խմբագիր «Երիտասարդ Հայաստան»ի՝
ԱՐՇԱՎԻՐ ՇԱՄԼՅԱՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Ամենայն Հայոց երջանկահիշատակ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի վախճանումը ծանր կորուստ է մեզ և համայն հայության համար: Ամերիկահայ Միջհայրենակցական միությունը Ձեզ հետ խորապես կսգա անհունորեն հայրենասեր մեծ Հայրապետի մահը:

Ատենապետ՝ ԱՆՆԻԿ ՍԵՐՈԲՅԱՆ
Ատենագրիր՝ ՄԱՐՏԻՆ ՃԱՎՅԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍԻՑ

Խորապես ողբացինք Գեորգ Զ. Կաթողիկոսի մահը: Աղոթում ենք Փրկչին, որ Ձեզ առաջնորդի Ս. Հոգու տեսիլքով:

ԱՆԹԻԼԻԱՍԻ ԴՊՐԵՎԱՆՈՒՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Ս. Նշան Եկեղեցասեր տիկնանց միության վարչությունը իր խորին ցավակցությունները կհայտնե Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսին վախճանման առիթով, կմաղթե անսասանություն Հայաստանյայց Առաքելական Ս. Աթոռին:

Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻՑ

Մեր տարեկան 16-րդ համագումարին այստեղ հավաքված 30 պատգամավորները և Միացյալ Նահանգներում ապրող սեբաստացիների մեծամասնությունը միաձայն հայտնում են իրենց խոր վիշտը և ցավակցությունը մեր սիրելի Հայր, մեր եկեղեցու Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Աստվածային օրհնությամբ ցանկանում ենք, որ Նրա հաջորդը լինի մի անձնվեր առաքյալ՝ ամբողջ աշխարհի հայ եկեղեցիների բախտը հաջող կերպով ղեկավարելու:

ՀԱՄԱՍԵԲԱՍՏԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

«Վասպուրական» միությունը խորապես կողբա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Թող Ամենաարարիչը Անոր հոգիին հանգստություն տա և Ս. Էջմիածնի Մայր Աթոռին արժանի հաջորդ մը պարգևե:

«Վասպուրական» միության կեդրոնական խորհուրդի
Նախագահ՝ ՏԵՐ ՄԿՐՏԻՉՅԱՆ
Քարտուղար՝ ՄԱՐԿՈՍ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԼՈՆԴՈՆԻՑ

Լոնդոնեն կխնդրենք Ձեր օրհնությունը և կմաղթենք, որ Ամենակալ Տերը ընդունի իր գավիթը Նորին Ս. Օծություն Գեորգ Զ. Կաթողիկոսի հոգին:

Նախագահ Անգլո-հայ երջանկակի՝
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՍՄԱՃՅԱՆ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Խորապես վշտացած ենք Գեորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսի մահվան առթիվ: Աղոթում ենք արժանի հաջորդի համար:

ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ
ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Ամենայն Հայոց Հովվապետ Գեորգ Զ. Կաթողիկոսի ցավալի մահվան կապակցությամբ խորը վշտով համակված, Իրանահայ մշակութային կազմակերպությունը հայտնում է իր անկեղծ ցավակցությունները այդ մեծ կորստի առթիվ:

ԻՐԱՆԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Թեհրանի Բեշադաբադ թաղի 15.000 հայությունը, սերտ կապով կապված իր ազգային և կրոնական ավանդություններին, Ձեզ հետ միասին անկեղծորեն սգում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի ցավալի մահը և համոզված է, որ ամբողջ աշխարհի հայության կրոնական կենտրոն էջմիածինը կաշխատի ըստ արժանվույն փոխարինել այդ մեծ կորուստը:

ԲԵԶԱԴԱԲԱԴԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՕԴԵՍԱՅԻՑ

Օդեսայի Հայ եկեղեցու հավատացյալները իրենց խոր ցավակցությունն են հայտնում Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ և աղոթում են Հանգուցյալի հոգու հանգստյան համար:

ՕԴԵՍԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱԼԵՊԻՑ

Ցավակցություն ենք մատուցում Նորին Սրբություն Գեորգ Զ. Կաթողիկոսի կորստի առթիվ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԻՐԻԱՅԻ ԵՐԿԱԹԳԾԻ
ԽԱՌԱՏ ՀԱՅ ԲԱՆՎՈՐՆԵՐ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Խորին ցավակցություններ:

«ԹԵՔԵՅԱՆ» ԿԱՆԱՆՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ

Կսգանք մեծագույն Հայրապետ Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Ցավակցություն կհայտնենք:

Առաջնորդ Նոր-Հանքն միության՝
ԱԲՐԱՀԱՄ ՕԼՄԵՍԵՔՅԱՆ

ՓԱՐԻԶԻՑ

Մեր անկեղծ ցավակցությունները:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՏԸՐԻՑ

Համախարբերդցիական հայրենակցական միության կեդրոնական վարչությունը, իբրև բարգման ամերիկահայ խարբերդցիներու, կմիացնե իր սուգը հայ հոգիներու և Հայաստանյայց եկեղեցիներու սուգին և կողբա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս Զորեֆչյանի վախճանումը:

Երկնային մխիթարությունով՝

Ի գիմաց Համախարբերդցիական հայրենակցական միության
կեդրոնական վարչության՝
ԳԱՐԵԳԻՆ ՏԵՐ ՂԱԶԱՐՅԱՆ,
ՊԱՂՏԱՍԱՐ ԿՈՒԼԿԱՍՅԱՆ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Ամերիկայի Կոլիֆորնիա նահանգի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ամենամյա 38-րդ համագումարը տեղի ունեցավ մայիսի 15-ին Կալիֆորնիա, Պասադենա, որտեղ անկեղծ ցավակցություններ արտահայտվեցան Նորին Սրբություն Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ, որ մեծ կորուստ է մեր Ազգի համար: Ձեր վշտի այս պահուն, թող Տերը Ձեզ բոլորիդ մխիթարե և զորացնե:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության
Կալիֆորնիա Նահանգի ամենամյա 38-րդ համագումարի նախագահ՝
ՀԱՅԿ ՅԱԶԸՃՅԱՆ

ԲԵՅՐՈՒԹԻՑ

Խորին ցավակցություններ: Հաստատ մնա Մայր Աթոռը, անսասան՝ Հայոց Եկեղեցին:

ՀԱՅԿ ԳԱՎՈՒՔՃՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Անհուն վշտով համակված ողբում եմ մեծագործ Հայրապետի մահը: Հայցում ենք Աստծուց, որ հայոց պարգևե արժանավոր մի նոր կաթողիկոս: Այստեղ հանդիսավորությամբ մայր եկեղեցում կատարեցինք թաղման արարողություն:

ՌՈՄԱՆ ԻՍԱՅԱՆ

ՀԱԼԵՊԻՑ

Խոր ցավակցություններ ենք հայտնում Վեհափառ Գեորգ Կաթողիկոսի անգուր կորստյան առթիվ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՏԸՄՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Խորին ցավակցություններ Վեհափառ Հայրապետի ցավալի կորստյան առթիվ:

ՀԱՅԿ ԴԱՐԱԳԱՇ

ՍՈՒԽՈՒՄԻՑ

Հայտնում ենք խոր ցավակցություն՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՍԱԹԵՆԻԿ ԲԱԲԻԿՅԱՆ,
ՍՈՆՅԱ ՄՈՒՂՈՒՍՅԱՆ,
ԱՍՅԱ ՌՈԳՈՆՅԱՆ,
ԼԵՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Հայտարարված է թաղման օրը տխուր հանդիսավորությամբ մատուցել սուրբ պատարագ և կատարել հոգեհանգիստ: Անհուն կսկիծով համակված, ողբում եմ մեծազորձ Վեհափառի մահը: Ծնկաչոք հայցում եմ Ամենակալից, որ Մայր Աթոռին պարգևի արժանավոր մի նոր Կաթողիկոս:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀԱՋՅԱՆ

ՍՈՒԽՈՒՄԻՑ

Խոր ցավակցություն եմ հայտնում Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՄԱՐԻԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՕԴԵՍԱՅԻՑ

Իմ խոր ցավակցությունն եմ հայտնում և ողբում եմ Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻՑ

Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցու ժողովուրդը և քահանայից դասը պատարագ մատուցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ի հոգու հանգստյան համար: Խաղաղություն աշխարհին:

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱԼԵՊԻՑ

Ամենայն Հայոց մեծ Հայրապետի թաղման առթիվ որդիական խոր ցավակցություններս պատկառելի խորհրդիդ:

ԵՐՎԱՆԴ ԵԴԱՅԱՆ

ՄԱՆՉԵՍՏՐԻՑ

Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյան.

Սրբազա՛ն Հայր,

Ամենայն Հայոց Վեհափառ Գեորգ Զ. Կաթողիկոսի վախճանման լուրը արտի անհուն տառապանքով կարդացի անգլիական «THE TIMES» օրաթերթի մեջ:

Հայաստանյայց Եկեղեցին, տակավին հազիվ սրափած բրիական հրեշային սպանդեն, անարկու, անմոռանալի և անմխիթարելի հարված մը ևս կստանա բոլորիս սիրելի, Հայր պատվական, Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետի վախճանումովը:

Գարեգին Կաթողիկոսի թողած սև շղարշը տակավին թարմ կմնա մեր արտերուն մեջ, և ահա Աստված ա՛լ ավելի թանձրացուց սուգը հայ ճշմարիտ արտերուն, որոնք մեծ հույսերով և ակնկալություններով աչքերնին կեդրոնացուցած են Ս. Էջմիածնի, հայու խորանին, լուսո տաճարին՝ ըմբոշխնելու շնորհները ու վայելելու պաշտպանությունը Միածնի ոսկի մուրճին:

Հայաստանյայց Եկեղեցին արտասահմանի մեջ, հայ գրականությունը, հայ լեզուն հոգևարքի մռայլ խանձարուրով են պատված: Տկարացած է հայու ազգայնական ոգին: Վեհափառ Հայրապետը Ինքն էր, որ Իր անձնական և ազնվական կեցվածքով, հմայած էր ո՛չ միայն մեզի կարոտալի Մայր Հայրենիքի հարազատները, այլ նաև պանդուխտ հայ հոգիները, որոնք ապագայի մեծ հույսերով կապրին: Միայն անոնք, որոնք գտնված են եվրոպական հողամասի վրա, կզգան անավորությունը ներմակ ջարդին: Մեզի համար մեծ ցավ է տեսնել հարազատներու տակավ առ տակավ կորուստը եվրոպական քաղաքակրթության քուրային մեջ: Միակ և միակ Հայրենիքն է, որ պիտի հանդիսանա փրկության անդաստանը, և Հայրենիք վերադառնալու մեծ հույսեր կներշնչեր լուսահոգի Գեորգ Զ. Հայրապետը:

Սրբազա՛ն Հայր. մասնավորաբար Դուք եք այն անձը, որ ա՛լ ավելի կզգաք կորուստին անավորությունը՝ ծանոթ ըլլալով տեղական կացության: Կոլեջի սենյակիս մեջ առանձնացած, ընկճված հոգիով ու արտասվալից աչքերով, կաղոթեմ Ամենակալին, որ Զեզի ուժ և կարողություն տա և համայն հայ ժողովուրդին մխիթարություն՝ իր անման կորուստին առթիվ: Թող Տերը Ինք հովվե փլատակներեն հազիվ ճողոպրած ու դարձյալ ընկճված հայու Մայր, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, թող Ինքը անմար պահե կանթեղը հայու տաճարին:

Հաջորդ կիրակի մասնավոր հոգեհանգստյան սուրբ պատարագ պիտի մատուցենք Մանչեստրի հայոց Ս. Երրորդություն եկեղեցվույն մեջ և պիտի աղոթենք հանգուցյալ Հայրապետի հոգվույն փրկության և Հայաստանյայց Ս. Եկեղեցվո պայծառության համար:

Մեր բոլորին միակ մաղթանքն է, որ Աստված մեզի պարգևեր մոտավոր ապագային արժանի Դահակալ մը՝ սրափեցնելու համար ընկճված հայ սրտերը:

Սրբազա՛ն Հայր, ընդունեցեք որդիական հարգանքներս և խորունկ ցավակցություններս այս առթիվ:

Մատչելով ի համբույր Ձեր Ս. Աջույն, Ձեր հարազատներեն՝

ՎԱՉԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՖԻԱՅԻՑ

Խորապես ազդված Ձեր ու մեր և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիին և անոր Պետին՝ Տ. Տ. Գեորգ Սրբազնագույն Կաթողիկոսի կորուստին համար, այսու կուգամ իմ տխրագին սրտով ցավակցությունս հայտնել այս մեծ կորուստի առթիվ:

ԴԱՆԻԵԼ ԱՎԱԳ ՍԱՐԿԱՎԱԳ Հ. ՌԱՋԳՐԱՏԼՅԱՆ

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ

Կիրովականի հավատացյալ ժողովուրդը և Ս. Աստվածածնա եկեղեցու համայնքը խոր վշտով հայտնում են Ձեզ իրենց սրտագին ցավակցությունը և անհուն կսկիծով ողբում են հանգուցյալ Հայրիկի, համայն հայության Սրբազնագույն հայրենասեր Կաթողիկոսի վաղաժամ մահը:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Խոր ցավակցություն եմ հայտնում մեր սիրելի Վեհափառ Հայրապետ Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Եկեղեցու սպասուհի՝
ԱՐՈՒՍՅԱԿ ԿԱՐՃԻԿՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

Լենինականի հավատացյալները ողբում են Վեհափառի մահը և աղոթում են, որ Նրա հոգին արժանանա երկնային արքայության:

ՄԻՔԱՅԵԼ ԱԴԱՄՅԱՆ

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Իմ խոր ցավակցությունն եմ հայտնում Վեհափառ Հայրապետի մահվան առթիվ:

ՔԼՈՒԴՅԱՆ ՔԱՀԱՆԱ

ԵՐԵՎԱՆԻՑ

Ողբում եմ Վեհափառ Հայրապետի դառնաղետ մահը: Վշտացած սրտով հայտնում եմ ցավակցություններս: Հանգուցյալը ունեցավ հրաշալի գործունեություն և թողեց անմոռանալի հիշատակ: Հանգի՜ստ իր անյունին:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԵՆԳՈՅԱՆՑ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Խորապես ողբում ենք Նորին Սրբության, մեր սիրելի Հոր և մեծագործ Կաթողիկոսի մահը, խոնարհվում ենք Նրա անյունի առջև: Ցավակցությունն ենք հայտնում Գերագույն Հոգևոր Խորհրդին և ողջ միաբանությանը:

ԽԱՉԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱ,
ՔԱՋԻԿ, ԱՆԴՐԱՆԻԿ ԵՎ ՀԵՆՐԻԿ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

ԲՐՈՒԳԼԻՆԻՑ

Ընդունեցեք խորին ցավակցություններս սիրելի Կաթողիկոսի մահվան առթիվ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ

ՖՐԵԶՆՈՅԻՑ

Ընդունեցեք մեր խորին ցավակցությունները Նորին Սրբություն Գեորգ Զ. Կաթողիկոսի մեծ կորուստին առթիվ: Տերը օժանդակե Ձեզ և մեր եկեղեցիին:

ԱՌԱՔԵԼ ՅԱԶԸՃՅԱՆ

ԿԱՀԻՐԵԻՑ

Խոր վշտով և անհուն կսկիծով տեղեկացանք Մայր Աթոռույդ Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսի հավիտենական հանգիստը:

Ո՞վ կրնար երևակայել, թե այսքան անակնկալորեն շուտ պիտի մարեր Ազգին ու եկեղեցիին մեծագույն փառքը կազմող այս լուսատու ջահը և մեծ Հայրենասերը:

Այս տխուր առթիվ, հաճեցեք ընդունիլ Կահիրեի Հայկական ընթերցասրահի բոլոր անդամներուն ցավակցությունները՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդիդ սրբազան հարց:

Խոր վշտակցությամբ,

Ի դիմաց Հայկական ընթերցասրահի վարչության
Ատենապետ՝ Գ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Ատենադպիր՝ ԴՈԿՏ. Ա. ՏԵՄԻՐՃՅԱՆ

ԿԱՀԻՐԵԻՑ

Համայն հայությունը սրտի անհուն կսկիծով կողբա հավիտենական հանգիստը հույժ սիրեցյալ Վեհափառին՝ Տ. Տ. Գեորգ Զ. Սրբազնագույն Կաթողիկոսի:

Հանկարծահաս այս այնքան տխուր գույժը կարեվեր խոցոտեց ընդհանուր հայության սիրտը, մեծ է կորուստը և անփոխարինելի:

Կողբանք կորուստը և հանուն մեր շրջանի բոլոր ընկերներուն, խոր ցավակցություններ կհայտնենք Գերագույն Հոգևոր Խորհուրդիդ, հայցելով Ամենակալեն, որ Անոր անմեռ հոգին դասե ի դասս անդրանկաց:

Խոր վշտակցությամբ և հարգանոք,

Ի դիմաց Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան Կուսակցության
Կահիրեի մասնաճյուղի վարչության՝
Ատենապետ՝ Խ. ԻՍԿԵՆՅԱՆ
Ատենադպիր՝ Ս. ՊԱԼՍՅԱՆ

ՉԻԿԱԳՈՅԻՑ

Խորունկ ցավով տեղեկացանք ազգընտիր Վենափառ Հայրապետի մահվան տխուր գույժը: Տակավին նոր, Վենափառի ստորագրությամբ կավետվեր Սիսյուանի հայության, թե Վարագա Ս. Խաչի տոնին Մեռոնօրհնեք պիտի կատարվեր Ս. Էջմիածնի մեջ, և այժմ, ավա՜ղ, այդ ավետաբեր լուրեն քիչ ժամանակ վերջ, ցավոք կլսենք սիրեցյալ Հայրապետի մահվան բոթը:

Խորապես կողբանք ու կսգանք այդ իմաստուն մեծ Եկեղեցականին, Լուսավորչի արժանավոր Գահակալին կորուստը, կաղոթենք Վենին մահուր ու անբիծ հոգվույն համար, և կմաղթենք, որ մոտալուտ ժամանակին Տերը արժանավոր Գահակալ մը պարգևե Հայաստանյայց Եկեղեցիին, ողբացյալ Հայրապետի ոգիով, իմաստությամբ, խոհականությամբ հովվելու Հայաստանի և Սիսյուանի իր հարազատ զավակները:

Այս հույժ տխուր առթիվ, հայտնելով Չիկագոյի Հայ Առաքելական եկեղեցվույս համայնքին խորունկ ցավն ու կսկիծը, մնամք խորին հարգանք,

Ի գիմաց ծխական խորհուրդի՝
Նախագահ և հոգևոր հովիվ՝ ՎԱՀՐԱՄ Ծ. ՎՐԴ. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
Ատենապետ՝ Խ. ՃԵՐԱՆՅԱՆ
Ատենագրիր՝ Տ. ԳԱՍԱՊՅԱՆ

ԱԼԵԱՆՔԱԼԱՔԻՑ

Հայտնում ենք խորին ցավակցություն հոգևոր Հայր Գեորգ Վենափառի մահվան առթիվ:

ԱԼԵԱՆՔԱԼԱՔԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐ

ՌՈՍՏՈՎԻՑ

Նոր-Նախիջևանի Ս. Լուսավորիչ եկեղեցու երգչախումբը խոր ցավակցություն է հայտնում իր նախկին խմբավար-մանկավարժ, անմոռանալի հայր սարկավագի, վարդապետի, եպիսկոպոսի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան առթիվ:

ՎԵՀԱՓԱՌԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

ՌՈՍՏՈՎԻՑ

Ողբում ենք մեր հարազատ Հոր մահը: Հայտնում եմ իմ անկեղծ ցավակցությունը:

Լուսավորիչ եկեղեցու երկարամյա ատենապետի՝
ՇՈՒՇԱՆԻԿ ԱԽՇԱՐՈՒՄՅԱՆ

ԲԱՔՎԻՑ

Բավեյան ընտանիքը հայտնում է իր խոր ցավակցությունը Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԼԵՎՈՆ ՍԱՀԱԿԻ ԲԱՎԵՅԱՆ

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ

ԼՈՆԴՈՆԻՑ

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան գույժը մեր սրտում արթնացրեց քրիստոնեական անկեղծ համակրանք հանդեպ այն հոտի, որին նա առաջնորդել էր այնքան երկար տարիներ: Հանգուցյալն Իր վեհությամբն ու փորձառությամբը հայտնի դարձավ բոլոր քրիստոնյաներին՝ որպես քրիստոնեության բարձրագույն առաջնորդներից մեկի: Ես ուզում եմ իմ անկեղծ ցավակցությունները հայտնել Հայ Եկեղեցուն՝ նման իմաստուն մի Հովվի կորստյան առթիվ:

Աղոթում եմ, որ Աստված առաջնորդի բոլոր նրանց, ովքեր պատասխանատվությունն ունեն ընտրելու հանգուցյալի արժանավոր հաջորդ: Անկեղծորեն հավատում եմ, որ Աստված սիրտի օրհնի և հսկի Հայ Եկեղեցու և ժողովրդի վրա և պահպանի նրանց քրիստոնեական հավատի ուժեղ վկայությունը, որի համար նրանք արդարորեն հռչակված են երկար դարերի ընթացքում:

Մնամ Ձեր անկեղծ և սիրող եղբայր ի Քրիստոս,

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈՅ՝
ՋԵՈՖՖՐԻ

ՌԻԳԱՅԻՑ

Պարտք եմ համարում հայտնել, որ մենք ստացանք Ձեր հեռագիրը՝ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի թաղումը մայիսի 23-ին նշանակելու մասին, ինչպես նաև մի փոքր առաջ ուղարկած առաջին հեռագիրը Նրա մահվան մասին:

Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու հոգևորականությունը և այդ Եկեղեցու Քահանայապետ արքեպիսկոպոսը և Գերագույն Եկեղեցական Վարչությունը խորապես ողբում են Սրբազնագույն Պատրիարքի մահը, ինչպես այդ արտահայտել ենք, Ձեր առաջին հեռագրին պատասխանելով անկեղծ ցավակցությամբ:

Հատկապես մորմոքում են մեզանից նրանք, ովքեր Նորին Վեհափառությանը ճանաչում էին ի մոտո, հանդիպում և զրուցում էին Նրա հետ խաղաղության կողմնակիցների կոնֆերենցիաներին Մոսկվայում, կամ օգտվում Նրա մեծագույն սիրալիրությունից և սրտագին հյուրասիրությունից՝ մայրաքաղաքում կամ Ս. Էջմիածինն այցելելիս, որ հիշում ենք շնորհակալությամբ:

Սակայն մեր մյուս հոգևոր հայրերը ևս՝ գործակալ քահանաները և քահանաները, ինչպես նաև ծխականները սրտանց ցավում են, որ այլևս կենդանի չէ այն նշանավոր, ամբողջ քրիստոնյա աշխարհին հայտնի, Հայոց պեհեր Սրբազնագույն Պատրիարքը, որի ձայնը Ռուսաց և Վրաց Սրբազնագույն Պատրիարքների ձայների հետ մեկտեղ հնչեց որպես եկեղեցական զանգահարություն բարձրաբերձ Կովկասից աշխարհով մեկ՝ բոլոր քրիստոնյաներին ուղղված դիմումի մեջ՝ պաշտպանելու խաղաղությունը՝ ընդդեմ պատերազմի չարիքի:

Ինչպես երբեք Պատրիարքների այն ընդհանուր դիմումը, այնպես և Հայոց Պատրիարքի անձնական ճառերն ու գրությունները զարդարված էին խոր իմաստությամբ: Դրանք բոլորի կողմից լսվում էին մեծ ուշադրությամբ ինչպես կոնֆերենցիաներում, նույնպես և եկեղեցիներում:

Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու հավատացյալները երբեք չեն մոռանա եկեղեցիների ամբիոններից լսված կամ եկեղեցական ճառընտիրներում կարդացված բիբլիական Արարատ լեռան մոտ գտնվող հնագույն արևելյան Քրիստոնյա Եկեղեցու Պատրիարքի ջերմ, իմաստուն, քրիստոնեական բարությամբ և սիրով ասված այն խոսքերը, որոնցով Նա Իր պատաս-

խան հեռագրերում ողջունում էր մեր եկեղեցին կամ Իր սրտագին օրհնյալ մաղթանքներն էր արտահայտում մեր եկեղեցուն՝ Գլխավոր Սինոդի ժողովի, այլ հանդեսների և եկեղեցական տոնակատարությունների ժամանակ:

Հանգուցյալ Հայրապետը հատկապես ուրախանում էր տեսնելով, որ Լատվիական եկեղեցին մյուս եկեղեցիների հետ մեկտեղ մտել է խաղաղության կողմնակիցների շարքերը և իր այլ բարի ձեռնարկումներով ցանկանում է ոչ թե մեկուսանալ, այլ գործակցել մյուս հոգևոր ընկերակցությանց հետ՝ եղբայրական քրիստոնեական սիրո հիմունքով և Հիսուս Քրիստոսի խաղաղասիրության դրոշի ներքո:

Խաղաղասիրական մերձեցումը փոխադարձ վստահության և հարգանքի հիման վրա և քրիստոնեական եկեղեցիների, դավանությունների և ժողովուրդների եղբայրական բարեկամությունը Հայոց իմաստուն Պատրիարքի խոր երազանքն էր, որ ոգևորում էր մեզ՝ մեր Հայրենիքի և հանրապետությունների բոլոր եկեղեցիների ավելի երիտասարդ պետերին, և այն դարձավ Սրբազնագույն Ալեքսիի բարի մտքի նախաձեռնությունը՝ հրավիրելու բոլոր եկեղեցիների և կրոնական միավորումների կոնֆերենցիա՝ նվիրված խաղաղության պաշտպանության հարցին, ինչպես այդ մասին ասաց Ինքը՝ Մոսկվայի Պատրիարքը տվյալ կոնֆերենցիայի բացման ժամանակ:

«Եղիցի մի հօտ և մի հովիւ»— Փրկիչ Քրիստոսի մերձեցման և հնարավոր միացման՝ հարավից, Արարատից եկող խոսքի վրա հիմնված, այս երազանքին են նման նաև հյուսիսում, Սկանդինավիայում, շվեդական արքեպիսկոպոս դոկտոր Ն. Զեդերբլոմի կողմից քրիստոնյաների միասնության վերաբերյալ Ուպսալայում իր ժամանակ արտահայտված մտքերը, որոնք, որքան հայտնի է, գուրգուրում և սատարում է Ողղափառ Եկեղեցին:

Թե որքան իմաստուն, բազմակողմանի և բեղմնավոր էր ի Տեր հանգուցյալ երջանկահիշատակ Գեորգ Զ.ի կյանքն ու գործունեությունը, ավելի լավ գիտեն իրենք՝ Նրա հարգարժան հոգևորականությունը, հավատացյալներն ու Գերագույն Հոգևոր Խորհուրդը, որոնց հայտնում ենք մեր խոր ցավակցությունը և հայցում Ամենաբարձրյալին՝ պարգևելու նրանց հոգեկան կորով վշտի պահին, և Նորին Սրբություն Պատրիարք-Կաթողիկոսի մահվամբ հնադարյան Հայ Եկեղեցուն հասած մեծ կորստի առթիվ:

Հնարավորություն չունենալով անձամբ ներկա գտնվելու թաղման հանդեսին, հոգով և մտքով լինելու եմ էջմիածնի հնադարյան Տաճարում, որպեսզի երախտագիտությամբ իմ հրաժեշտի ողջույնը մատուցեմ Քրիստոնեական Եկեղեցու հանգուցյալ մեծ Գործչին, իմ հոգևոր Հորը և Ուսուցչին ու խաղաղության բարեկամին:

Երեկ, Ռադվիլիշկիի (Լիտվական ՍՍՌ) Ավետարանական-Ռեֆորմատորական եկեղեցում, հոբելյանական ժամերգության ժամանակ, մենք, այդ եկեղեցու հոգաբարձու Ա. Շեռնասի և Լիտվական Կոնսիստորիայի անդամ ավետարանական-լութերական քահանա Յա. Կալվանսի և եկեղեցու պաշտոնյաների և բազմաթիվ հավատացյալների հետ միասին, հանդիսավոր աղոթքով և սգո օրհնությամբ մեծարեցինք և հիշատակեցինք ի Տեր հանգուցյալ Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Գեորգ Զ.ին:

Երջանկահիշատակ Պատրիարքի հիշատակը նման ձևով կմեծարենք Լատվիայի Ավետարանական-Լութերական բոլոր տաճարներում կիրակի, մայիսի 23-ին, Նրա թաղման օրը:

Խաղաղություն Ձեզ:

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ՌԻԳԱՅԻՑ

Հայտնում ենք մեր անկեղծ ցավակցությունը խաղաղության ականավոր մարտիկ, Հայոց Առաքելական Եկեղեցու արժանավոր Հովվապետ, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ: Ցանկանում ենք Հայ Եկեղեցուն՝ համերաշխությամբ և խաղաղությամբ շարունակելու բարի գործերի իր ուղին:

Լատվիական ՍՍՌ Հիճծիսական Գերագույն Խորհրդի Նախագահ՝
ԿՈՒՋՆԵՑՈՎ
Գերագույն Խորհրդի գործերի կառավարիչ՝
ԵԳՈՐՈՎ

ՔԵՆՏՐԵԵՐԻՑ

Շնորհակալ եմ Ձեզանից այն բանի համար, որ ինձ ուղարկել եք Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահը գուժող հեռագիրը: Այդ տխուր մի գույժ էր, և ես անմիջապես կարգադրեցի, որ Մայր Եկեղեցում աղոթք արվի Նրա համար, Նրա կյանքի և գործի համար շնորհակալության հետ միասին:

Ինչքան լավ եմ հիշում Նրան, և Նրա ողջ բարությունը ինձ հանդեպ՝ Նրա օծման սքանչելի արարողության ընթացքին, երբ ես առանձնաշնորհվել էի կանգնելու Նրա կողքին, երբ Նա մտավ Ձեր մեծ Կաթուղիկե եկեղեցին: Հիշում եմ նաև Նրա սերը երաժշտության հանդեպ և Նրա զգացած հաճույքը գեղեցիկ պարտեզից, որը վերջում վերանորոգվել էր Նրա վայելքի համար:

Թող Աստված օրհնի Ձեզ բոլորիդ, և առաջնորդի Ձեզ Գեորգ Զ.ի հաջորդի ընտրության գործում:

Սրտագին բարեմաղթություններով՝

Քենտրբերիի Տաճարի վանահայր՝
Ավագերեց ՀՅՈՒԼԵՏՏ ՋՈՆՍՈՆ

ՎԵՆԵՏԻԿԻՑ

Մխիթարյան միաբանությունը աղոթելով կբաժնե ազգային ծանր վիշտը Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ:

Վենետիկի Մխիթարյան միաբանության՝ վանահայր՝
ՍՐԱՊԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆ

ԹԵՀՐԱՆԻՑ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ.ի մահվան առթիվ խոր վշտով հայտնում ենք Իրանի Նեստորական ասորի համայնքի խոր վշտակցությունը՝ համայն հայ ժողովրդին և Գերագույն Հոգևոր Խորհրդին:

Ասորի Եկեղեցական վարչության նախագահ՝
ՄՈՒՇԵՂ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ԲՈՒՅՆԱԿՍԿԻՑ

Հյուսիսային Կովկասի և Դաղստանի Հոգևոր վարչության և բոլոր հավատացյալ մուսուլմանների անունից մեր խոր ցավակցությունն ենք հայտնում Հայոց Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի ծանր կորստի առթիվ: Ցանկանում ենք Նրան Երկնքի արքայություն, ամեն:

Հյուսիսային Կովկասի և Դաղստանի մուսուլմանների
Հոգևոր վարչության նախագահ՝
ՀԱՋԻ ՄԱՀՄԵԴ ԿՈՒՐԲԱՆՈՎ

ԵՐԵՎԱՆԻՑ

Դեմիրբուլաղ մզկիթի գործադիր կոմիտեն խոր ցավակցություն է հայտնում Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Սրբազնագույն Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Երևանի Դեմիրբուլաղ մզկիթի խորհրդի նախագահ՝
ՖԱՐԱՋԵՎ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

Նախիջևանի մուսուլմանների կրոնական համայնքի կողմից խոր ցավակցություն ենք հայտնում Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Նախիջևանի մզկիթի կազի՝
ԱԲԲԱՍ ԻԲՐԱՀԻՄՈՎ

ՈՒՖԱՅԻՑ

ՍՍՌ Միության Եվրոպական մասի և Սիբիրի մուսուլմանների Հոգևոր վարչությունը խոր ցավակցություն է հայտնում Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՄՈՒՖՏԻ ԽԻԱԼԵԴԻՆՈՎ

ՎԻԼՆՅՈՒՍԻՑ

Խորապես կարեկցում եմ Հայ Եկեղեցու հոգևորականության և հավատացյալների վշտին: Շնորհակալություն եմ հայտնում վեհափառ Հանգուցյալի թաղման վերաբերյալ ծանուցման համար: Հոգով աղոթում եմ Աստուծո ծառա Գեորգի հոգու հանգստյան համար:

Պանևիժիսի և Վիլնյուսի եպիսկոպոս՝
ԿԱԶԻՄԻԵՐԱՍ ՊԱԼՏԱՐՈԿԱՍ

ԲԱՔՎԻՑ

Գեորգ Զ. Կաթողիկոսի մահվան առթիվ հայտնում եմ ցավակցություն ողջ հայ ժողովրդին և խաղաղության համար պայքարող բոլոր մարտիկներին: «Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Ինձ հանձնարարված է՝ ցավակցություն հայտնել Ադրբեջանի բոլոր մուսուլմանների և Բաքու քաղաքի մոլոկան-ավետարանականների անունից:

Ավետարանական-քրիստոնյա մկրտականների
Համամիութենական խորհրդի անդամ՝
ՏԵՐ-ԱՎԱՆԵՍՈՎ

ԱՇԽԱԲԱԴԻՑ

Ամենայն Հայոց հավերժահիշատակ Կաթողիկոս Գեորգ Զ.ի թաղման օրը խնդրում եմ ընդունել իմ ամենասրտագին ցավակցությունը: Այսօր աղոթում էի Նրա հոգու հանգստյան համար: Մաղթում եմ Հայ Եկեղեցուն՝ Հանգուցյալի առաքինություններով օժտված արժանավոր հաջորդ:

Ցաքեենգի և Միջին Ասիայի առաջնորդ՝
ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԵՐՄՈԳԵՆ

ՄՈՍԿՎԱՑԻՑ

Ընդունեցեք մեր անկեղծ ցավակցությունը 1952 թվականին խաղաղության կրոնական կոնֆերենցիայում մեզ անձամբ ծանոթ Մայրագույն Պատրիարք Նորին Սրբություն Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ՀԻՆԹԻՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝
ԻՈԱՆՆ

ԹԲԻԼԻՍԻՑ

Ցավակցում ենք Ամենայն Հայոց Պատրիարք և Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

Քրիստոնյա մոլոկաններեի Թբիլիսիի համայնքի
գործադիր մարմնի նախագահ՝
ՐԵՄԻԶՈՎ

ԹԲԻԼԻՍԻՑ

Մեծագույն վշտի զգացմունքով միանում ենք այն ծանր վշտին, որ առաջացել է բոլոր հավատացյալների սրտերում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի մահվան առթիվ:

ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ՀՐԵԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ